63 Սրտիս մեջ կա անուշ երգ մ՚այսօր,

1. Սրտիս մեջ կա անուշ երգ մ՚այսօր,
Ուրախ կառնեմ իմ քայլերս բոլոր,
Գտած եմ մի Բարեկամ,
Որ առանձին չմնամ,
Խոստացած է իմ հետս ըլլալ ամեն օր:

Խոստացած է իմ հետս ըլլալ ամեն օր՝
Այս է երգս կյանքիս օրերը բոլոր,
Չարեն ինչո՞ւ ալ վախնամ,
Տերն ինծի մոտ երբ գիտնամ,
Խոստացած է իմ հետս ըլլալ ամեն օր:

2. Վստահությամբ ես հիմա կերգեմ,
Իր ճամփաներն արդար են, գիտեմ,
Ալ ես մինակ չեմ քալեր,
Զի Տերն կյանքիս է ընկեր,
Խոստացած է իմ հետս ըլլալ ամեն օր:

3. Իր շնորհքով պիտ հաղթանակ շահիմ,
Իր զորությամբ հաստատուն կայնիմ,
Փորձությունք երբ հարձակին,
Փրկչին անվամբ հաղթվին,
Խոստացած է իմ հետս ըլլալ ամեն օր: